

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի
Դաշնային Հանրապետության կառավարության միջև «Էներգետիկայի
բնագավառում
անհապաղ օգնության միջոցառումներ» նախագծի շրջանակում
ֆինանսական
համագործակցության վերաբերյալ

Ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության և
Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև առկա
բարեկամական հարաբերություններից, կամենալով ամրապնդել և
խորացնել առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային
ֆինանսական համագործակցության միջոցով, գիտակցելով, որ այդ
հարաբերությունների պահպանումը սույն Համաձայնագրի հիմքն է կազմում,
մտադրություն ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության
սոցիալական և տնտեսական զարգացմանը և կենսագործել երկու երկրների
կառավարությունների միջև 1995 թվականի դեկտեմբերի 12-13-ը Բոննում
կայացած բանակցությունների արդյունքները,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

1. Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը
հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետության
կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից համատեղ
ընտրվելիք այլ վարկառուի Մայնի Ֆրանկֆուրտի Վերականգնման
վարկային հաստատությունից «Էներգետիկայի բնագավառում անհապաղ
օգնության միջոցառումներ» նախագծի իրականացման համար մինչև
10.000.000 (բառերով՝ տասը միլիոն) գերմանական մարկ գումարի վարկ
ստանալ, եթե նա քննության առնելուց հետո հավաստում է, որ նախագիծը
խրախուսման արժանի է:

2. 1-ին պարբերությունում նշված նախագիծը կարող է Հայաստանի
Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության
կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ փոխարինվել այլ
նախագծով:

3. Եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը
Հայաստանի Հանրապետության կառավարությանը հնարավորություն է
ընձեռում հետագայում ևս Մայնի Ֆրանկֆուրտի Վերականգնման վարկային
հաստատությունից վարկեր կամ ֆինանսական նպաստներ ստանալ
նախագծի նախապատրաստման նպատակով կամ ֆինանսական այլ
նպաստներ ստանալ նախագծի իրականացման և խնամատարության
նպատակով ձեռնարկվող հարակից միջոցառումների իրականացման
համար, ապա կիրառվում է սույն Համաձայնագիրը:

4. Նախապատրաստական և հարակից միջոցառումների իրականացման համար 3-րդ պարբերության համաձայն տրամադրվող ֆինանսական նպաստները փոխանակվում են վարկի, եթե չեն օգտագործվում վերոնշյալ միջոցառումների համար:

Հոդված 2

1. 1-ին հոդվածում նշված գումարի կիրառումը և տրամադրման պայմանները, ինչպես նաև պատվերի հանձնարարման կարգը սահմանվում են Վերականգնման վարկային հաստատության և վարկառուի միջև կնքվելիք պայմանագրով, որը կազմվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

2. Եթե վարկառուն Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէ, ապա նա երաշխավորում է ի դեմս Վերականգնման վարկային հաստատության բոլոր վճարումները գերմանական մարկով՝ ի կատարումն 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Վերականգնման վարկային հաստատությանն ազատում է այն բոլոր հարկերից և պետական այլ տուրքերից, որոնք բխում են Հայաստանի Հանրապետությունում 2-րդ հոդվածում հիշատակված պայմանագրի կնքումից և իրականացումից:

Հոդված 4

Վարկի տրամադրումից բխող՝ ցամաքով, ջրով և օդով իրականացվող՝ մարդկանց և ապրանքների փոխադրումների պարագայում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ուղևորների և առաքողների տրանսպորտային ձեռնարկությունների ազատ ընտրության հնարավորություն է ընձեռում, չի ձեռնարկում այնպիսի միջոցներ, որոնք բացառում կամ խոչընդոտում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության տեղակայված տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը փոխադրումների իրականացմանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այդ ձեռնարկությունների մասնակցությունն արտոնող թույլտվություններ է տալիս:

Հոդված 5

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը կարևորում է այն հանգամանքը, որ վարկերի և ֆինանսական նպաստների տրամադրումից բխող առաքումների և ծառայությունների պատվիրման հարցում նախապատվությունը տրվի Բրանդենբուրգ, Մեքլենբուրգ-Ֆորպոմերն, Սաքսոնիա, Սաքսոնիա Անհալտ, Թյուրինգեն և Բեռլին դաշնակցային

երկրամասերի տնտեսական հնարավորություններին: Այլ դրույթները ձևակերպում կստանան 2-րդ հոդվածում հիշատակված պայմանագրում:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ծանուցում է, որ ավարտված է իրավական ուժ ստանալու համար օրենքով սահմանված ներպետական ընթացակարգը: Հիմք է ընդունվում ծանուցման ստացման օրը:

Կատարված է Երևան քաղաքում 1997 թվականի հուլիսի 25-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և գերմաներեն, ընդ որում երկու շարադրանքներն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի փետրվարի 9-ից: